Հաստատում եմ՝

Դպրոցի տնօրեն՝ Ն. Մնացականյան

01.09.2023թ.

Վայոց ձորի մարզ

Հերմոնի հիմնական դպրոց

# «Գիրքը՝ հրաշք բանալի»
# խմբակի ծրագիր

Ծրագրի տևողությունը՝ 1 ուս.տարի
ժամերի ընդհանուր քանակը՝ 68 ժամ
Տարիքային խմբերը՝ 3-4-րդ և 8-9-րդ դասարաններ

Խմբակի ղեկավար՝ Տ. Ղարիբյան

2023-2024 ուս.տարի

# Պարզաբանող գրություն

Գրքերի ընթերցանությունը մարդու քաղաքակիրթ դաստիարակության հիմքն է: Շատ կարևոր է դեռահասների մեջ սերմանել հետաքրքրություն դեպի ընթերցանությունը, քանի դեռ այն չի դարձել սովորություն: Այսպիսի նպատակ է հետապնդում **«Գիրքը՝ հրաշք բանալի »** խմբակը:
Աշխատանքը խմբակում հնարավորություն է ստեղծում ընդլայնել սովորողների գիտելիքները՝ գրողների և իրենց աշխատությունների մասին:
Աշխատանքն արդիական է, քանի որ այսօր ժամանակակից աշակերտները գրողի կյանքի մասին տեղեկանում են հիմնականում դասագրքերից կամ համացանցից: Այս գրական ստեղծագործական խմբակը աշակերտներին հնարավորություն կտա այլ տեսանկյունից նայել գրական ստեղծագործություններին, վերլուծել, կարծիք արտահայտել, ապացուցել սեփական տեսակետը, և իհարկե, կապ հաստատել իրական կյանքի հետ:
Արդիականությունը կայանում է նաև նրանում, որ մեր օրերում շատ ընտանիքներում ընթերցանությունը դուրս է մղված առօրյայից՝ համացանցի, համակարգչային խաղերի, հեռուստատեսության պատճառով:
Մանկավարժական տեսանկյունից այսպիսի ստեղծագործական խմբակը անհրաժեշտ է դպրոցին, նախ և առաջ, գրականությունը ավելի լավ յուրացնելու, աշհարհընկալումը և մտահորիզոնը լայնացնելու համար: Կատարված աշխատանքը հնարավորություն կտա աշակերտին զգալ պատմական այն ժամանակաշրջանը, որը պատկերված է տրված ստեղծագործության մեջ, համեմատել այն արդի շրջանի, հասարակության և ընդունված նորմերի հետ:

# Ծրագրի նպատակները

1. Ուսումնասիրել հեղինակների կենսագրությունները և ծանոթանալ որոշ ստեղծագործությունների հետ
2. Մեծացնել ընթերցանության շրջանը, բարձրացնել կարդալու որակը
3. Աշակերտի մոտ ձևավորել հետաքրքրություն դեպի գիրքը
4. Զարգացնել վերլուծական մտածողությունը, երևակայությունը, ստեղծագործական հմտությունները
5. Բարձրացնել գրական տեքստի ընկալման մակարդակը:

## Ծրագրի խնդիրները

Նշված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

1. Սովորողների մոտ զարգացնել գիրք կարդալու պահանջը
2. Զարգացնել ստեղծագործությունը էմոցիոնալ մակարդակում հասկանալու և ընկալելու կարողություն
3. Օգնել սովորողին կարդացած տեքստը գրագետ վերլուծել և քննարկել
4. Գործնականում կիրառել ստացած գիտելիքները (պատմել, հորինել պատմվածքներ, գրել բանաստեղծություններ, հեքիաթներ)
5. Կատարել ստեղծագործական աշխատանքներ կապված ստեղծագործության հերոսի կամ հերոսների հետ՝ նամակներ, թերթեր, կենսագրություններ, սոցիալական էջեր
6. Համեմատել գիրքը և գրքի հիման վրա նկարահանված ֆիլմը:

## Ուսուցման ձևերը

Անհատական և խմբային
Ուսուցման մեթոդները՝ գործնական, տեսողական, ստեղծագործական աշխատանք (դասընթացի ավարտին նախատեսվում է սեփական ստեղծագործության ներկայացում), ֆիլմերի դիտումներ, քննարկումներ, պատի թերթեր:

## Ուսուցման վերջնարդյունքները

1. Հասկանալ գրքի կարևորությունը մարդու կյանքում
2. Վերլուծել կարդացած ստեղծագործությունը
3. Արտահայտել, հիմնավորել, պաշտպանել սեփական տեսակետը և դիրքորոշումը
4. Օգտագործել երևակայությունը և ստեղծագործական մտածողությունը
5. Ստեղծել տարբեր ոճերի և ժանրերի գրավոր և բանավոր խոսք
6. Համեմատել գրքերում ներկայացված պատմական ժամանակաշրջանը իր ապրած ժամանակաշրջանի հետ

Գնահատել իր և ուրիշների կարծիքն ու փաստարկները, վերլուծել
ատճառահետևանքային կապերը և կայացնել որոշումներ
Գտնել և օգտագործել տեղեկություն տարբեր աղբյուրներից
Ցուցաբերել հանդուրժողականություն և մարդասիրություն
. Համադրել և վերլուծել գրական ստեղծագործությունը և դրա հիման
ա նկարահանված ֆիլմը, մուլտֆիլմը
. Վերահսկել իր զգացմունքները և ցանկությունները , իր առջև դնել
կատակներ, մշակել դրանց հասնելու ուղիներ և լինել հետևողական

## Ուսուցման թեմատիկ պլանավորում

| | Թեմայի անվանումը | Ժամերի քանակը |
|---|---|---|
| | Ներածական դաս<br>Խմբակի նպատակները և խնդիրները | 1 |
| 2 | Անտուան դը Սենտ- Էքզյուպերի<br>Կենսագրություն | 1 |
| 3 | «Փոքրիկ Իշխանը» | 1 |
| 4 | «Փոքրիկ Իշխանը» մուլտֆիլմի դիտում | 1 |
| 5 | Ամփոփում | 1 |
| 6 | Ստեղծագործական ժամ | 1 |
| 7 | Հովհաննես Թումանյան<br>Կենսագրություն | 1 |
| 8 | Բանաստեղծություններ | 2 |
| 9 | Քառյակներ | 2 |
| 10 | Հեքիաթներ | 2 |
| 11 | Պատմվածքներ | 2 |

| | |
|---|---|
| 12 | Հովհաննես Թումանյանի մասին տեսանյութի դիտում |
| 13 | Գործնական աշխատանք<br>Հովհաննես Թումանյանի կյանքն ու գործունեությունը |
| 14 | Ամփոփում |
| 15 | Ստեղծագործական ժամ |
| 16 | Հեկտոր Մալո<br>Կենսագրություն |
| 17 | «Առանց ընտանիքի» |
| 18 | «Առանց ընտանիքի» ֆիլմի դիտում |
| 19 | «Առանց ընտանիքի» զրույց, քննարկում |
| 20 | Ամփոփում |
| 21 | Պարույր Սևակ<br>Կենսագրություն |
| 22 | Բանաստեղծություններ |
| 23 | Դիտել տեսանյութ Պարույր Սևակի մասին |
| 24 | Ամփոփում |
| 25 | Ստեղծագործական ժամ |
| 26 | Գործնական աշխատանք |
| 27 | Մեսրոպ Մաշտոց<br>Կենսագրություն |
| 28 | Հայոց գրերի գյուտը, պատմական նշանակությունը |
| 29 | Գործնական աշխատանք |
| 30 | Ամփոփում |

| | | |
|---|---|---|
| | | 1 |
| | Ստեղծագործական ժամ | 1 |
| | Վաղթանգ Անանյան<br>Կենսագրություն | 2 |
| | Վաղթանգ Անանյան<br>«Հովազածորի գերիները» | 1 |
| | Ամփոփում | 1 |
| | Եղիշե Չարենց<br>Կենսագրությունը | 2 |
| 6 | Բանաստեղծություններ | 2 |
| 7 | Իմ սիրելի բանաստեղծությունը | 1 |
| 8 | Պոեզիան ամենուր | 1 |
| 9 | Ամփոփում | 1 |
| 40 | Ստեղծագործական ժամ | 1 |
| 41 | Հովհաննես Շիրազ<br>Կենսագրություն | 2 |
| 42 | Բանաստեղծություններ | 1 |
| 43 | Իմ մայրիկը, զրույց քննարկում | 1 |
| 44 | Ստեղծագործական ժամ | 2 |
| 45 | Գործնական աշխատանք | 1 |
| 46 | Շառլ Ազնավուր<br>Կենսագրություն | 2 |
| 47 | Բանաստեղծություններ | 2 |
| 48 | Երաժշտական ժառանգությունը | 1 |
| 49 | Հուշեր Շառլ Ազնավուրի մասին | |

| | | |
|---|---|---|
| 50 | Ամփոփում | 1 |
| 51 | Ամփոփիչ ստեղծագործական ժամ | 1 |

# Ծրագրի բովանդակություն

| N | Թեման | Բովանդակություն | Ն |
|---|---|---|---|
| 1 | Ներածական դաս Խմբակի նպատակները և խնդիրները | Խոսել խմբակի նպատակների և խնդիրների մասին, քննարկումներ, Աշխատանքը դպրոցում | |
| 2 | Անտուան դը Սենտ-Էքզյուպերի կենսագրություն «Փոքրիկ Իշխանը» | Տեսանյութեր, գիրք, մուլտֆիլմ դիտել, քննարկել, գործնական աշխատանքը դպրոցում | |
| 3 | Ստեղծագործական ժամ | | |
| 4 | Հովհաննես Թումանյան | Զրույց, քննարկումներ, ֆիլմի դիտում, բանավեճ | |
| 5 | Հովհաննես Թումանյանի կյանքն ու գործունեությունը | Աշխատանքը դպրոցում | |
| 6 | Ստեղծագործական ժամ | | |
| 7 | Պարույր Սևակ Կենսագրություն Բանաստեղծություններ | Բանաստեղծությունների ընթերցանություն, քննարկումներ Աշխատանքը դպրոցում | |
| 8 | Հեկտոր Մալո «Առանց ընտանիքի» Ֆիլմի դիտում | Աշխատանքը դպրոցում | |
| 9 | Ստեղծագործական ժամ | | |
| 10 | «Առանց ընտանիքի» | Գրքի ընթերցանություն, | |

| | | | |
|---|---|---|---|
| | | Կարդալ գիրքը, քննարկել կերպարներին: Դիտել ֆիլմը, համեմատականներ տանել գրքի հետ Աշխատանքը տանը և դպրոցում | |
| | Եղիշե Չարենց Կենսագրական տվյալներ, Ստեղծագործություններ | Ծանոթանալ կենսագրական տվյալներին և ստեղծագործություններին, խոսել առանձնահատկություններից Գրքի ընթերցանություն. Աշխատանքը դպրոցում | |
| | Բանաստեղծություններ | Բարձրաձայն ընթերցել,վերլուծել, քննարկել, նախընտրածը սովորել անգիր Աշխատանք տանը և դպրոցում | |
| | Գործնական աշխատանք | | |
| | Ծառ Ազնավուր Ազնավուրը Ազնավուրի մասին | Գրքի ընթերցանություն, առանձին հատվածների քննարկումներ Աշխատանքը դպրոցում | |
| | Ստեղծագործական ժամ | | |
| | Վաղթանգ Անանյան Կենսագրություն «Հովազաձորի գերիները» | Ընթերցել, քննարկել, ծանոթանալ գրողի կյանքի հետ Գրքի ընթերցանություն, առանձին հատվածների քննարկումներ, Աշխատանք դպրոցում | |
| | Ստեղծագործական ժամ | | |
| | Պոեզիան ամենուր | Խոսել պոեզիայից, առանձնահատկություններից, լսել աշակերտների անհատական պատկերացումները երևույթի վերաբերյալ | |

| | | | |
|---|---|---|---|
| | | Կարդալ գիրքը, քննարկել կերպարներին: Դիտել ֆիլմը, համեմատականներ տանել գրքի հետ Աշխատանքը տանը և դպրոցում | |
| | Եղիշե Չարենց Կենսագրական տվյալներ, Ստեղծագործություններ | Ծանոթանալ կենսագրական տվյալներին և ստեղծագործություններին, խոսել առանձնահատկություններից Գրքի ընթերցանություն. Աշխատանքը դպրոցում | |
| | Բանաստեղծություններ | Բարձրաձայն ընթերցել,վերլուծել, քննարկել, նախընտրածը սովորել անգիր Աշխատանք տանը և դպրոցում | |
| | Գործնական աշխատանք | | |
| | Ծառ Ազնավուր Ազնավուրը Ազնավուրի մասին | Գրքի ընթերցանություն, առանձին հատվածների քննարկումներ Աշխատանքը դպրոցում | |
| | Ստեղծագործական ժամ | | |
| | Վաղթանգ Անանյան Կենսագրություն «Հովազաձորի գերիները» | Ընթերցել, քննարկել, ծանոթանալ գրողի կյանքի հետ Գրքի ընթերցանություն, առանձին հատվածների քննարկումներ, Աշխատանք դպրոցում | |
| | Ստեղծագործական ժամ | | |
| | Պոեզիան ամենուր | Խոսել պոեզիայից, առանձնահատկություններից, լսել աշակերտների անհատական պատկերացումները երևույթի վերաբերյալ | |

| | | |
|---|---|---|
| 19 | Հովհաննես Շիրազ Կենսագրություն Բանաստեղծություններ | Զրույց, քննարկումներ Բանաստեղծությունների ըթերցանություն |
| 20 | Ստեղծագործական ժամ | |
| 21 | Գործնական աշխատանք | |
| 22 | Իմ սիրելի բանաստեղծությունը | Սովորողը պետք է ներկայացնի իր ամենասիրելի բանաստեղծությունը, բանավե |
| 23 | Մեսրոպ Մաշտոց Կենսագրական տեղեկություններ Հայոց գրերի գյուտը | Ծանոթանալ կենսագրական տվյալներին, խոսել առանձնահատկությունների Գործնական աշխատանք, Աշխատանքը տանը և դպրոցում |
| 24 | Շառլ Ազնավուր Կենսագրություն Բանաստեղծությունները Երաժշտական ժառանգությունը | Ծանոթանալ կենսագրությանը, քննարկե դերը հայ մշակույթի զարգացման մեջ, լսել երգեր կիսվել տրամադրությամբ,անգիր սովորել բանաստեղծություններից նախընտրածը |
| 25 | Գործնական աշխատանք | |
| 26 | Ամփոփիչ ստեղծագործական ժամ | Ներկայացնել սեփական ստեղծագործությունը, քննարկում, ամփոփել |

# Գնահատումը

Սովորողների գործունեության գնահատումը նախատեսվո
իրականացնել հետևյալ կերպով՝ առավելագույն գովասանք
քննադատություն: Նույնիսկ այն դեպքում, երբ սովորողի
սկզբունքորեն սխալ է, բացի քննադատական խոսքից պետ

գովեստի խոսքեր: Քանի որ, հակառակ դեպքում սովորողը կարող է
ցորցնել ինքնավստահությունը և հետաքրքրությունը:
Աշակերտների գնահատումը պետք է իրականացնել ձևավորող
գնահատման բաղադրիչների օգնությամբ:
Աշակերտները պետք է ներգրավված լինեն դպրոցական բոլոր
միջոցառումներում, ունենան գործուն մասնակցություն ուսումնառության
ընթացքում, իրականացնեն ինքնագնահատում, փոխադարձ գնահատում:

Աշակերտների ստեղծագործական աշխատանքներից
ավագույնները կտեղադրվեն դպրոցի կայքում